ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՋՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆ. Հ. Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին բացառիկ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ու կուլտուրական տեսակետից։ Հայ ժողովուրդն ազատվեց ֆիզիկական բնաջնջման ահեղ վտանգից։ Ի հակադրություն նախորդ ժամանակաշրջանի, երբ Հայաստանի բնակչությունը ոչ միայն չէր աճում, այլ, ընդհակառակը, նվազում էր՝ որպես հետևանք պարսիկ խաների վարած քաղաքականության, Ռուսաստանին միացվելուց հետո Հայաստանի բնակչության շարժումը երևան է բերում բոլորովին հակառակ տենդենց, որն արտահայտվեց նրա արագ աճման մեջ, ընդ որում ոչ այնքան ի հաշիվ բնական աճի, որքան մեխանիկական։

Թուրքմենչայի պայմանագրով հայերին թույլատրվում էր Իրանից գաղթել դեպի Հայկական մարզ և այնտեղ մշտական բնակություն հաստատել։ Գաղթողներն իրավունք ունեին վերցնել իրենց հետ շարժական գույքը և վաճառել անշարժ գույքը։ Գաղթը, որ սկսվեց պայմանագրի կնքումից հետո, շարունակվեց նաև հաջորդ տարին։ Այդ ժամանակամիջոցում Պարսկաստանից դեպի Հայաստան, ինչպես և Անդրկովկասի մյուս հայաբնակ վայրերը գաղթած հայերի ընդհանուր թիվը կազմում էր 45 հազար մարդ, որից Հայաստանում բնակվողներինը՝ 35 հազար։ Բացի Պարսկաստանից, դեպի Արևելյան Հայաստան սկսվեց հայերի ներգաղթը նաև Արևմտյան Հայաստանից։ 1828—29 թթ. պատերազմից հետո Էրզրումի, Կարսի, Բայազետի, Մուշի, Վանի և Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններից Անդրկովկաս ներգաղթեց ավելի քան 90 հազար մարդ։ Արևմտահայ գաղթականների մեծ մասը, մոտ 47 հազար մարդ, բնակություն հաստատեց Հայաստանում, մասնավորապես Սևանի ավազանում, Ապարանում, Շիրակում և Լոռիում։

1829—1832 թթ. անցկացվեց այսպես կոչված «կամերալ ցուցակագրություն», ըստ որի այժմյան Սովետական Հայաստանի տերիտորիայի բնակչությունը 1831 թ. կազմում էր 161.747 մարդ։ Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից կատարված ներգաղթի շնորհիվ մեծ թվով ամայի գյուղեր շենացան։ Պարսկահայ և արևմտահայ բնակչության ներգաղթով էապես փոխվեց այստեղի բնակչության ազգային կազմը հօգուտ հայ տարրի ուժեղացման։ Հայ բնակչության տեսակարար կշիռը 1827 թ. 40%-ից 1831 թ. բարձրացավ մինչև 69,3%։

Ռուս-պարսկական պատերազմի ավարտումից, Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո հայ բնակչության մի զգալի մասի կենտրոնացումը այստեղ խոշոր նշանակություն ունեցավ երկրի արտադրողական ուժերի զարգացման համար։ Նախ բարձրացավ բնակչության խտությունը, ստեղծվեցին նոր գյուղեր, սկսվեց խոպանացած հողերի հերկումը և օգտագործումը։ Օգտը-

վելով խաղաղ պայմաններից, ժողովուրդն սկսեց տնտեսական գործունեություն ծավալել գյուղատնտեսության, առևտրի և արհեստների բնագավառում։

Հայաստանի բնակչության շարժման տենդենցները դրսևորող երևույթներից մեկն էլ ցարիզմի կողմից այստեղ ռուս աղանդավորներ տեղափոխելն էր, ազատ, երբեմն էլ՝ ոչ ազատ հողերի գաղութացումը։ Այդ պրոցեսն սկսվեց 1844 թ. և շարունակվեց մի քանի տասնամյակ։ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ խճուղու վրա առաջին խոշոր գաղութը հիմնվեց Վորոնցովկա անունով (այն ժամանակվա Կովկասի փոխարքայի անունով)։ Հետևյալ՝ 1845 թ. հիմնվեց Նովո-Միխայլովկա գյուղը։ Ապա մեկը մյուսի հետևից հիմնվեցին նոր գաղութներ՝ Ելենովկա, Սեմյոնովկա, Գոլովինո և այլն։ 1844 թ. մինչև 1885 թ. հիմնվեցին այդպիսի 21 գյուղեր և նրանցում բնակեցվեց 11.200 մարդ։

Ինչպես նախքան Ռուսաստանին միանալը, այնպես էլ միացումից հետո, ընդհուպ մինչև 1870-ական թթ., Հայաստանի բնակչության շարժումը իրա կանանում էր ֆեոդալական արտադրահարաբերությունների պայմաններում։ Դրան համապատասխան էլ բնութագրվում էր նրա սոցիալական կազմը։ Այստեղ հասարակության հիմնական դասակարգերն էին ֆեոդալները և գյուղացիությունը։ Նոր ձևավորված Հայկական մարզում, ըստ 1829—1832 թթ. ցուցակագրության տվյալների, գոյություն ունեին 440 մյուլքաղարներ և թիուլղարներ՝ 3.173 շնչով։ Բացի մուլքաղարներից ու թիուլղարներից, արտոնյալ դասին էին պատկանում նաև Մարդարի ու տեղական կառավարման ապարատին պատկանողները, ինչպես նաև բարձր հոգևորականությունը։ Այս ամենին հակադիր դասակարգ էր կազմում գյուղացիությունը, որին անգութորեն շահագործման ու կեղեքման էին ենթարկում արտոնյալ դասերը և առաջին հերթին տոհատերերը։ Հայաստանի բնակչության մոտ 90%-ը կազմում էր գյուղացիությունը, որը շահագործվում էր բնակչության ընդամենը 2,5—3% կազմող ֆեոդալների կողմից։ Բացի գրանցից, մարզի բնակչության որոշ մասը զբաղվում էր արհեստներով և առևտրով։

Ռուս-պարսկական պատերազմների ավարտմամբ երկրում ստեղծվեց խաղաղ ժամանակաշրջան և սկսվեց երկրի տնտեսական կյանքի որոշակի աշխուժացումը։ Երևան քաղաքը դարձավ մարզային կենտրոն։ Եթե մինչև Ռուսաստանին միանալը Հայաստանում միակ քաղաքը Երևանն էր, ապա 1840 թ. նախկին Գյումրի գյուղը վերածվեց քաղաքի՝ Ալեքսանդրապոլ անունով, իսկ Քյավառ գյուղի ավերակների վրա ձևավորվեց նոր Բայազետ քաղաքը։ Ժողովրդական տնտեսության զարգացումը ուղեկցվում էր աշխատանքի հասարակական բաժանման հետ, որը և հասցրեց ապրանքային արտադրության աճին։

XIX դարի 50—60-ական թթ. տեղի էր ունենում ինատնտեսության քայքայում։ Գյուղերում և քաղաքներում սկսեցին զարգանալ արհեստները։ Այսպես կոչված տնային արդյունաբերությունը հետզհետե իր տեղը զիջում էր արհեստին։ Համաձայն «Կովկասյան օրացույց»-ի տվյալների, 1851 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում տարբեր արհեստներով զբաղվում էին մոտ 200 մարդ։ Այդ ժամանակ քաղաքի բնակչությունը կազմում էր 15 հազար մարդ։ Ջանցած 15 տարի, նույն Ալեքսանդրապոլ քաղաքում 24 անուն արհեստներ էին հաշվվում, որոնցով զբաղված էին 850 վարպետներ, 603 ենթավարպետներ և 780

1 «Кавказский календарь», 1852, էջ 276։

աշակերտներ։ Նրանց թողարկած արտադրանքի արժեքը տարեկան կազմում էր 160 հազար ռուբլի արժաթով։ Երևան քաղաքի արհեստների մասին նահանգական վիճակագրության նյութերում ասված է, որ Երևանում արհեստով են զբաղված եղել ընդամենը 250 մարդ, որից 154 վարպետներ, 39 ենթավարպետներ և 61 աշակերտներ[2]։ Ճետագայում ինչպես Երևանում, այնպես էլ Ալեքսանդրապոլում արհեստներն ավելի են աշխուժանում և այդ հիման վրա ծավալվում է ապրանքային շրջանառությունը։ Արդեն 1860-ական թթ. վիճակագրական հաշվետվություններում խոսվում է այն մասին, որ Ալեքսանդրապոլի արհեստավորների թողարկած արտադրանքն արտահանվում է Թիֆլիս և Թուրքիա։ Ապրանքների իրացումը կատարում էին ոչ թե իրենք՝ արհեստավորները, այլ հատուկ մարդիկ, որոնք զբաղվում էին առևտրով։ Մանր արտադրության և առևտրի զարգացումը կատարվում էր արժեքի օրենքի անմիջական ներգործության տակ, որը հասցնում էր ապրանքարտադրողների միջև մրցության ուժեղացման։ Իբրև կանոն, մանր ապրանքային արտադրության զարգացումը տանում է դեպի կապիտալիզմ, սակայն այստեղ այդ անցումը կատարվում էր խիստ դանդաղ. դա պայմանավորված էր Հայաստանի պատմական անցյալով մինչև Ռուսաստանին միանալը, իսկ միացումից հետո՝ ցարիզմի գաղութային քաղաքականությամբ։

Հետռեֆորմյան Ռուսաստանի էկոնոմիկայի բնորոշ գիծը ապրանքային հարաբերությունների այնպիսի զարգացումն էր, երբ աշխատուժն էլ դարձավ ապրանք, այսինքն արտադրության ֆեոդալական եղանակը փոխարկվեց կապիտալիստականի։ Կապիտալիզմի զարգացումը և ներքին շուկայի ընդլայնումը պահանջում էին հաղորդակցության ճանապարհների կատարելագործում։ Ռուսաստանում զարգացող կապիտալիզմը պետք է ընդհուպ ձեռնամուխ լիներ ծայրամասերի յուրացմանը, որ նշանակում էր կապիտալիզմի զարգացումն ըստ լայնքի։ Անխուսափելի էր դառնում կապիտալների հոսքը կենտրոնից դեպի ծայրամասերը։ Վ. Ի. Լենինը ուսումնասիրության ենթարկելով կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ըստ խորության, միաժամանակ շատ արժեքավոր ցուցումներ է տվել ըստ լայնքի կապիտալիզմի զարգացումը և ծայրամասերի բնակչության կազմի, նրա շարժունակության վրա դրա ներգործությունը ուսումնասիրելու ուղղությամբ։ Որպեսզի Ռուսաստանը կարողանար Անդրկովկասը տնտեսապես յուրացնել, անհրաժեշտ էր ամենից առաջ լիկվիդացնել այն կտրվածությունը, որ գոյություն ուներ Ռուսաստանի և Անդրկովկասի միջև։ Բացի այդ, ռազմաստրատեգիական նկատառումներով ևս անհրաժեշտ էր Անդրկովկասը կապել Ռուսաստանի հետ երկաթուղիներով և խճուղիներով։

Անդրկովկասում երկաթուղագծեր կառուցելու ծրագրերը հաստատվեցին 1861 թ., իսկ 1867 թ. սկսվեց նրանց շինարարությունը։ Աշխատանքներն ըսկըսվեցին Փոթի նավահանգստից դեպի Թիֆլիս։ Այդ երկաթուղու կառուցումն ավարտվեց 1872 թ.։ Ապա աշխատանքները շարունակվեցին Թիֆլիս—Բաքու տեղամասի վրա, որն ավարտվեց 1883 թ.։ Երկաթուղային շինարարությանը զուգահեռ սկսվեց խճուղիների կառուցումը, այդ թվում նաև Թիֆլիս — Երևան Ջուլֆա գծով։ Հիշյալ խճուղային ճանապարհը խոշոր նշանակություն ունեցավ

2 ЦГИА Арм. ССР, ф. 126, д. 7.

Երևանի համար։ Ավելի ուշ կառուցվեց Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս երկաթուղին (1899)։

Հազորդակցության ճանապարհները խոշոր ազդեցություն ունեցան բնակչության շարժունակությունը բարձրացնելու գործում։ Այդ պրոցեսը հանգեցրեց ոչ հողագործական բնակչության և վարձու աշխատանքի աճին։

Նույն տարիներին կատարվում էր տեղական ազգային առևտրական կապիտալի վերածում արդյունաբերական կապիտալի. միաժամանակ սկսեց Անդրկովկաս ներհոսել արտասահմանյան կապիտալը։ Անդրկովկասը արդյունաբերական տեսակետից դարձավ կայսրության շրջաններից մեկը՝ իր համապատասխան արդյունաբերական դեմքով։ Բաքուն, օրինակ, դարձավ Ռուսաստանի հիմնական ու գլխավոր նավթային շրջանը, Վրաստանը՝ մարգանեցի։ Անդրկովկասը տալիս էր Ռուսաստանում արտադրվող պղնձի զգալի մասը, որը հայթայթվում ու մշակվում էր Հայաստանում։ Այսպիսով, կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ըստ լայնքի խորապես փոխեց Անդրկովկասի սոցիալ-տնտեսական դեմքը, որի դրսևորումներից մեկն էլ հանդիսացավ բնակչության աճն ընդհանրապես և քաղաքային բնակչությանը՝ մասնավորապես։

Հայկական ՍՍՌ վիճակագրության վարչության կողմից նախասովետական ժամանակաշրջանի Հայաստանի բնակչության վերաբերյալ զանազան ցուցակագրություններից ու մարդահամարներից վերցված ու ճշտված տվյալներով Հայաստանի բնակչության թիվը կազմել է՝[3]

1813 թ.	161.747
1873 թ.	496.140
1886 թ.	635.833
1897 թ.	797.855
1913 թ.	1.000.100

Այսպիսով, 82 տարվա ընթացքում Հայաստանի բնակչությունը աճել էր ավելի քան 6 անգամ և դա գերազանցապես մեխանիկական աճի հետևանք էր։ XIX դարի 30-ական թթ. ընդհուպ մինչև դարի վերջը դեպի Հայաստան էին ներգաղթում Թուրքիայի, Իրանի և այլ վայրերի հայ բնակչության զգալի զանգվածներ։ Ինչ վերաբերում է բնակչության բնական աճին, ապա պետք է նկատել հետևյալը։ Բնակչության աճն այստեղ կատարվում էր էքստենսիվ ձևով, որ նշանակում էր, թե ծնունդների բարձր թվի առկայության պայմաններում բավականաչափ բարձր էր նաև մահացությունը։ Ըստ վիճակագրական տվյալների, նախկին Երևանյան նահանգում XIX դարի վերջին տասնամյակում բնակչության տարեկան միջին աճը կազմել է 1,7%, որպես հետևանք 100 շնչին հասնող 3,75 ծննդի և 2,02 մահացության։

XIX դարի վերջին Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 90%-ը կազմում էր գյուղական բնակչությունը։ Իր հերթին գյուղացիությունը բաղկացած էր պետական գյուղացիներից, տերունական ժամանակավոր պարտավորյալ գյուղացիներից և խիզաններից։ Գյուղացիության ճնշող մեծամասնությունը պետական գյուղացիներն էին, որոնց տեսակարար կշիռը գյու-

3 «Населенные пункты и население Армянской ССР». Статистический сборник. Ереван, 1962, էջ 55։

ղացիական բոլոր տնտեսությունների մեջ հավասար էր 83%-ի (տերունականը՝ 16%, ժամանակավոր պարտավորյալներն ու խիղանները՝ 1%)։

Գյուղացիության սոցիալական դրությունը պարզելու համար նման բաժանումը բավական չէ, քանի որ գյուղը թափանցող կապիտալիստական հարաբերությունները գյուղացիությանը ենթարկում էին խոր շերտավորման։ Հետռեֆորմյան շրջանում սովորական երևույթ էր դարձել հողի կենտրոնացումը սակավաթիվ կուլակների ձեռքում։ Գյուղական բնակչության գդալի մասը տնտեսապես քայքայվելով՝ հասնում էր վարձու բանվորի մակարդակին և հանդես էր գալիս որպես իր ուժը վաճառող։

Քայքայվող գյուղացիության ոչ մեծ մասը մնում էր գյուղում և իր գոյությունը պահպանելու համար հարկադրված էր բատրակության դիմել։ Ցարական պաշտոնական վիճակագրությունը ուղղակի տվյալներ չի տալիս գյուղում վարձու աշխատանքի կիրառման մասին, ուստի մենք ստիպված ենք օգտագործել անուղղակի տվյալները։ Ստորև օգտվելով 1897 թ. մարդահամարի տվյալներից, մենք ցույց կտանք (ըստ գավառների) վարձու աշխատանքի կիրառումը գյուղատնտեսության մեջ[4]։

Երևանի գավառ.—Գավառում ծխերի թիվը կազմել է 17.735, որից իրենց տնտեսության մեջ վարձու աշխատանք են կիրառել 942 ծուխ։ Տնտեսության մեջ վարձու աշխատողներ ունեցողների թիվը հետևյալն է եղել.

Մեկ	վարձու	աշխատող	ունեցողներ	. . . . .	852	տնտեսություն
2—3	»	»	»	. . . . .	85	»
4—5	»	»	»	. . . . .	3	»
6—10	»	»	»	. . . . .	2	»

Մեր հաշվարկումներից պարզվում է, որ վարձու աշխատանք կատարողների ընդհանուր թիվը կազմել է 1096 մարդ։ Եթե նկատի ունենանք, որ գյուղական չքավոր ծխերից յուրաքանչյուրը մեկ մարդ է վարձով տվել, ապա այդ դեպքում Երևանի գավառի գյուղական ծխերի մոտ 6%-ը վարձու աշխատանք է կատարել գավառի սահմաններում։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ բացի դրանից գյուղական չքավորների մի մասը դիմում էր արտագնացության։ Այստեղ, իհարկե, մենք նկատի ունենք ոչ թե կարճատև արտագնացությունը, այլ հարատև (մեկ և ավելի տարի ժամանակով), որը տնտեսության լիակատար քայքայման ցուցանիշ է։ Եթե հաշվի առնենք նաև արտագնացության դիմողների թիվը, ապա վարձու աշխատանքի դիմողները կկազմեն գյուղացիական տնտեսությունների 10%-ը։

1894 թ. գավառի գյուղական ծխերի 37—42%-ը չի ունեցել բանող անասուններ, 36%-ը բոլորովին ցանքս չի ունեցել։ Այսպիսով, չքավոր գյուղացիները կազմել են գավառի բոլոր ծխերի 63%-ը, միջակները՝ 32%-ը, կուլակները՝ 5%-ը։

Ալեքսանդրապոլի գավառ. —Գյուղական ծխերի թիվը հաշվվում է 14 հազար, դրանցից վարձու աշխատանք են կիրառել 263 տնտեսություն, այդ թվում ունեցել են՝

4 Հայաստանի գավառների վերաբերյալ տվյալները վերցված են հետևյալ գրքից. «Памятная книжка Эриванской губернии», 1906, отдел II, էջ 160—165։

1 աշխատող	218	տնտեսություն
2—3 »	39	»
4—5 »	4	»
6—10 »	2	»

Վարձու աշխատանքից օգտվողները կազմել են բոլոր ծխերի 1,9%-ը, որոնք վարձել են 370 մարդ, այսինքն գյուղական ծխերի 2,5%-ը։ Համեմատած Երևանի գավառի հետ՝ վարձու աշխատանքի կիրառումը գյուղատնտեսության մեջ այստեղ ցածր է, իսկ բևեռացումը՝ համեմատաբար մեղմ։ Բանող անասուն չունեցողները կազմել են գյուղական ծխերի 16%-ը, ցանքս չունեցողները՝ 19%-ը։ Ալեքսանդրապոլի գավառի վերաբերյալ 1—2 անասուն ունեցողների, ինչպես նաև ըստ ցանքսերի խմբավորումներ չկան։ Այնուհանդերձ, իբրև ընդհանուր երևույթ, Երևանի նահանգում ցանքս չունեցողների ավելի շատ ծխեր պատկանում են 1—2 անասուն ունեցողների խմբին, ինչպես նաև 1—2 դեսյատին ցանքս ունեցողների խմբին։ Երևանի գավառում այդ տոկոսը 26 էր։ Եթե Ալեքսանդրապոլի գավառի համար էլ ընդունենք այդ ցուցանիշը, ապա չքավորները կկազմեն բոլոր ծխերի 45%-ը։

Նոր Բայազետի գավառ. — 1897 թ. մարդահամարի տվյալներով, գավառի գյուղական ծխերի թիվը կազմել է 13.100։ Դրանցից վարձու աշխատանք են կիրառել 252 տնտեսություն, կամ գյուղական ծխերի մոտավորապես 2%-ը։ Այդ թվում ունեցել են

1 աշխատող	208	տնտեսություն
2—3 »	40	»
4—5 »	4	»
6—10 »	—	»

Սրանց մոտ աշխատել են ընդամենը 346 մարդ կամ մոտավորապես 2,5%-ը։

Բացի դրանցից, գյուղի սակավազոր տնտեսություններին պատկանողների որոշ մասը դիմել է արտագնացության։ Այսպես, համաձայն Բայազետի ոստիկանական վարչության տվյալների՝ միայն 1892 թ. անձնագիր է տրված եղել 1.242 հոգու գավառից դուրս գալու և արտագնացության մեկնելու համար։ Եթե ընդունենք, որ դրանց կեսը սեզոնային աշխատանքի են մեկնել հարթավայրերում, նորից 600 հոգի մնում են որպես տեսական արտագնացության դիմողներ։ Այսպիսով, գյուղական ծխերի մոտ 4,5%-ը դիմել է երկարատև արտագնացության։ Այս թիվն ավելացնելով գյուղում վարձու աշխատանք կատարողների վրա, կստանանք վարձու աշխատանք կատարողների ամբողջ քանակությունը, որ կազմում է գյուղական ծխերի 7%-ը։ Ծխերի 34%-ը չի ունեցել բանող անասուն, իսկ ցանքս չի ունեցել 30%-ը։

Էջմիածնի գավառ. — Գյուղական ծխերի 4,6%-ը իրենց տնտեսության մեջ կիրառել է վարձու աշխատանք, իսկ վարձու աշխատանք կատարողները կազմել են բոլոր ծխերի 5,5%-ը։ Գյուղական ծխերի 42,3%-ը 1894 թ. չի ունեցել բանող անասուն։ Եթե մեկից երկու անասուն ունեցողներին էլ հաշվենք չքավորներ, այն ժամանակ գյուղի շերտավորումը կարտահայտվի այսպես.

Չքավորներ և բատրակներ	70%
Միջակներ	25%
Կուլակներ	5%

Դարալագյազի գավառ. — Գյուղական ծխերի 4%-ը կիրառել է վարձու աշխատանք. վարձվողները կազմել են բոլոր ծխերի 5%-ը։ Դարալագյազի վերաբերյալ պետական գյուղացիների տնտեսական պայմաններն ուսումնասիրողները ծխերը խմբավորել են ըստ նրանց ունեցած բանող անասունների, ինչպես նաև ըստ մթերատու անասունների։ Այս տեսակետից գյուղի շերտավորման պատկերն ըստ այդ ցուցանիշների արտահայտելը համեմատաբար հեշտանում է։ Բարեբախտաբար Շարուր-Դարալագյազի գավառի տվյալները ցույց են տրված ըստ գավառամասերի՝ առանձին-առանձին, ուստի օգտվելով գրրանցից, մենք վերցնում ենք միայն Դարալագյազը, նկատի առնելով, որ Շարուրը չի մտնում այժմյան Սովետական Հայաստանի տերիտորիայի մեջ։ Դարալագյազի գավառամասից հետազոտվել է 1.330 տնտեսություն։ Ըստ բանող անասունների գյուղական ծխերը հետևյալ պատկերն են ունեցել.

Բանող անասուններ չեն ունեցել 256 ծուխ կամ հետազոտված ծխերի 19%-ը.

1 գլուխ անասուն են ունեցել	373	. . . . .	9%-ը
2 » » »	211	. . . . .	17 »
3—4 » » »	447	. . . . .	34 »
5—6 » » »	225	. . . . .	16 »
7—12 » » »	69	. . . . .	5 »

Այսպիսով, բանող անասուն չունեցողներն ու 1—2 գլուխ անասուն ունեցողները, որոնք գյուղի բատրակային և չքավոր տարրերն են, կազմում են բոլոր ծխերի 45%-ը։ 3—6 բանող անասուն ունեցողները միջակ տնտեսություններն են, որոնք կազմում են գյուղական ծխերի 50%-ը, իսկ մնացած 5%-ը՝ կուլակները։

Առավել խիստ է այստեղ բևեռացումը ըստ մթերատու խոշոր եղջերավոր անասունների։ Նույն տվյալներից երևում է, որ մթերատու խոշոր եղջերավոր անասուն բոլորովին չեն ունեցել հետազոտված ծխերի 25%-ը, 1 գլուխ անասուն ունեցել են ծխերի 12,9%, 2 գլուխ՝ 17,2%-ը, 3—6 գլուխ՝ 30,9%-ը, 6—11 գլուխ՝ 12,9%-ը, իսկ 11—20 գլուխ՝ 1%-ը։

Մթերատու անասունների գծով կատարված խմբավորումը թերի է, որովհետև դրանից հնարավոր չէ իմանալ, թե 6—11 գլուխ անասուն ունեցողները միջակներ են, թե՞ ունևորներ։ Բանն այն է, որ հետազոտված շրջանը անասնապահական է, ուստի բազմանգամ, սակայն աշխատավոր տնտեսությունը կարող էր մինչև 8 գլուխ մթերատու խոշոր եղջերավոր անասուն ունենալ։ Եթե մենք այդ խմբի տնտեսությունների մեկ երրորդը հաշվենք 8—11 գլուխ անասուն ունեցողներ, այն ժամանակ կուլակային տնտեսությունները կկազմեն 5%, միջակ տնտեսությունները՝ 40%, իսկ չքավորները՝ 45%։

Այսպիսով, կապիտալիզմի զարգացման հիման վրա հայ գյուղում հանդես են գալիս սոցիալական տարբեր խմբերի պատկանող գյուղացիներ՝ մի կողմում գյուղական բուրժուազիան, իսկ մյուս կողմում՝ գյուղական պրոլետարական ու կիսապրոլետարական խավերը։ Դրանց մի մասը գիմում էր

աշխատուժի վաճառքի (տեղում և արտագնացության ճանապարհով), իսկ մյուս մասը, այդ ուժի կիրառության ասպարեզ չգտնելով, կիսաքաղց վիճակ էր ապրում. կազմելով այսպես կոչված ագրարային գերբնակչություն։

Պրոլետարական ու կիսապրոլետարական խմբերին պատկանող գյուղացիները, ինչպես տեսանք, Հայաստանի տարբեր գավառներում ունեին տարբեր տեսակարար կշիռ։ Մեր հաշվարկով Հայաստանի մասշտաբով դրանց կազմում էին գյուղացիական բոլոր տնտեսությունների 52%-ը։ Միջակները կազմում էին 40%-ը, իսկ կուլակները՝ 8%-ը։

Ինչ վերաբերում է քաղաքային բնակչությանը և նրա սոցիալական կազմում կատարվող փոփոխություններին, ապա պետք է ասել հետևյալը։ Քաղաքային բնակչության բնական աճն առավել էքստենսիվ էր, քան գյուղականը։ Այսպես, Երևան քաղաքի բնակչության բնական աճը ստացվում էր 100 շնչին 2 ծննդի և 1,87 մահացության տարբերությունից և կազմում էր 0,14%։ Թեև քաղաքային բնակչության բնական աճը ամբողջ բնակչության աճի համեմատությամբ շատ ցածր էր, սակայն կատարվում էր քաղաքային բնակչության առավել բարձր մեխանիկական աճ, որը երևում է ստորև բերվող տվյալներից.

Հայաստանի քաղաքների բնակչության աճը
1831—1897 թթ.

Քաղաքները	1831 թ.	1886 թ.	1897 թ.
Երևան	11.463	14.738	29.006
Ալեքսանդրապոլ .	—	24.230	30.616
Նոր Բայազետ . .	—	7.488	8.456

Ինչպես տեսնում ենք, քաղաքային բնակչությունը աճել է բավական արագ։ Հայաստանի այն ժամանակվա երեք քաղաքներից ամենարագմամարդն է եղել Ալեքսանդրապոլը։ Դա բացատրվում է մի շարք հանգամանքներով։ 1897 թ. մարդահամարի ժամանակ Ալեքսանդրապոլը հանդիսանում էր առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոն և առևտրական կապերի մեջ էր գտնվում Թուրքիայի հետ։ Այդ ամենից բացի Ալեքսանդրապոլում կենտրոնացված էր զորքերի զգալի քանակություն։

Բացի նշված երեք քաղաքներից, XIX դարի վերջերին լեռնային արդյունաբերության զարգացման կապակցությամբ արդյունաբերական օջախներ առաջացան Ալավերդիում և Զանգեզուրում։ Չնայած դրան, Անդրկովկասի քաղաքային բնակչության աճի համեմատությամբ Հայաստանի քաղաքային բնակչության աճը կատարվում էր ավելի դանդաղ։ Այսպես, օրինակ, 1865—1886 թթ. ընթացքում Անդրկովկասի գլխավոր քաղաքների բնակչությունը աճել է 77%-ով (այդ թվում Աղրբեջանում՝ 257%), մինչդեռ Հայաստանի քաղաքների բնակչության աճը կազմել է 30,6%։ Բաքվի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի և Քութայիսի բնակչությունը ավելի արագ տեմպերով աճեց հաջորդ տասնամյակում։ Երևանի ու Ալեքսանդրապոլի բնակչության աճը, ինչպես ասվեց, անհամեմատ ավելի դանդաղ էր կատարվում։ Այնուամենայնիվ բնակչությունն ավելի արագ էր աճում Ալեքսանդրապոլում, սակայն դա ոչ թե հետևանք էր գյուղական բնակչության հոսքի, այլ՝ ներգաղթի. ինչպես հայտնի է, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, ինչպես և դրանից հետո, Թուրքիայից Ալեքսանդրապոլ գաղթեցին մեծ թվով հայեր։

Ազրբեջանում և Վրաստանում կապիտալիստական արդյունաբերության զարգացման հետևանքով քաղաքային բնակչությունն արագ տեմպերով աճում էր ի հաշիվ հոգագործական բնակչության, մինչդեռ Հայաստանում գրությունն այլ էր։ Այստեղ գյուղական բնակչության քայքայման պրոցեսը չէր ուղեկցվում քաղաքային բնակչության համապատասխան աճով։ Տնտեսապես քայքայված հայ գյուղացին իր ուժերի կիրառում չգտնելով Հայաստանում, դիմում էր պանդխտության (Բաքու, Թիֆլիս և այլ վայրեր)։ Ահա թե ինչու բնակչության՝ հողից կտրվելու պրոցեսը չէր հանգեցնում քաղաքային բնակչության աճին։

Ըստ պրոֆ. Պաժիտնովի տվյալների, 1903 թ. Բաքվի նավթ արտադրող բանվորների 27,9%-ը հայեր էին (6.600 մարդ). դրանց մի զգալի մասը այն գյուղացիներն էին, որոնք թողել էին գյուղը և մեկնել Բաքու աշխատանքի։

Այդ պրոցեսների հետևանքով քաղաքային բնակչության տեսակարար կշիռը դնալով պակասում էր։ Այսպես, եթե 1897 թ. քաղաքային բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության 11,1%-ը, ապա 1913 թ. այն կազմում էր ընդամենը 10,4%։ Քաղաքային բնակչության տեսակարար կշռի իջնելը չէր արտացոլում քաղաքային և գյուղական բնակչության աճի կապիտալիստական որինաչափությունները, այլ դրսևորում էր Հայաստանի կիսագաղութային վիճակը, այն, որ արդյունաբերության թույլ զարգացած լինելու հետևանքով Հայաստանի աշխատունակ բնակչության որոշ մասը դիմում էր արտագնացության։ Այսպես՝ առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին Երևանի նահանգի գյուղական բնակչությունից արտագնացության են դիմել (դեպի Անդրկովկասի կենտրոնները և Ռուսաստան) տարեկան 25 հազար մարդ և արտասահման (գլխավորապես ԱՄՆ)՝ ավելի քան 2 հազար մարդ։ Ահա համապատասխան տվյալները[5]։

Տարիներ	Արտագնացներ տվող գյուղերի թիվը	Արտագնացների թիվը			Ընդամենը
		Նահանգի ներսում	Նահանգից դուրս	արտասահման	
1912	828	14.847	20.348	2.118	37 013
1913	891	17.446	29.149	2.137	48.732

Արտագնացների այդ քանակությունը համարյա հավասար էր գյուղական տարական սեռի աշխատունակ բնակչության տարեկան աճին։

Ինչ վերաբերում է բուն Հայաստանում արդյունաբերական բնակչության աճին ու այդ հիման վրա՝ բանվոր դասակարգի ձևավորմանը, ապա պետք է ասել հետևյալը։

Դեռ հին ժամանակներից Հայաստանում մշակվում էին Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերը։ Այն պահին, երբ Հայաստանը միացավ Ռուսաստանին, նշված պղնձահանքերի մի մասն առհասարակ չէր մշակվում, մի մասն էլ մշակվում էր այսպես կոչված տնային արդյունաբերության ձևով, հետևապես խոսք չէր կարող լինել վարձու աշխատանքի մասին։ XIX դարի երկրորդ կեսից, երբ հետզհետե առաջանում են մանուֆակտուրաներ, սկիզբ է առնում վարձու աշխատանքը։ Պղնձահանքային արդյունաբերության բուռն վերելքը Հայաստանում և այդ հիման վրա՝ բանվոր դասակարգի կազմավորումը վերաբերում է 1890-ական թթ. և սերտորեն կապված է Ռուսաստանում կատարվող

5 Տե՛ս «Экономический вестник Армении», 1923. № 2. էջ 23։

արդյունաբերական վերելքի հետ։ Ռուսաստանում մետաղաձուլական ու մետաղամշակման արդյունարերություններ պղնձի մեծ պահանջ ներկայացրեց։ Այսպես, 1882 թ. մինչև 1890 թ. պղնձի սպառումը եռապատկվեց։ Միաժամանակ 1890 թ. Ռուսաստանում պղնձի սպառումը կազմում էր 613 հազար փութ, իսկ արտադրությունը՝ ընդամենը 349,5 հազար փութ, այսպիսով պակասորդը կազմում էր 273,5 հազար փութ[6]։ Հենց այդ տարիներին էլ սկսվում է պղնձարդյունաբերության հուժկու վերելքը Հայաստանում, որը շարունակվում է ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը։ 1913 թ. Հայաստանում արտադրվել է 337 հազար փութ պղինձ, որը կազմում էր Ռուսաստանում արտադրվող պղնձի 16%-ը։

Բացի պղնձարդյունաբերությունից, 1913 թ. Հայաստանում կային նաև սննդարդյունաբերության, մասնավորապես գինու և կոնյակի կապիտալիստական ձեռնարկություններ։ Համեմատաբար խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ էին նաև մեքենայական արհեստանոցները, էլեկտրակայանները և այլն։ Ամբողջապես վերցրած՝ խոշոր արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թիվը 1913 թ. կազմում էր մոտ 5.000 մարդ, ըստ որում պղնձարդյունաբերության մեջ զբաղված էր 4.400 բանվոր, գինու-կոնյակի արդյունաբերության մեջ՝ 290 բանվոր, կաշվի՝ 100 բանվոր, մետաղամշակման՝ 152 բանվոր, էլեկտրակայաններում՝ 14 բանվոր։ Բացի արդյունաբերությունից, Հայաստանի երկաթուղիներում և արհեստանոցներում աշխատում էր մոտ 1.000 բանվոր։ Արդյունաբերության նշված ճյուղերում և տրանսպորտում աշխատողները կադրային բանվորներ էին, սակայն, բացի նրանցից, Հայաստանի մանր արդյունաբերության հարյուրավոր ձեռնարկություններում աշխատում էին մոտ 4.000 մարդ, որոնք դեռևս կապված էին գյուղի հետ և կիսով չափ էին միայն բանվորներ։ Այսպիսով, 1913 թ. Հայաստանի մեկ միլիոն բնակչությունից ընդամենը 6.000 մարդ էր աշխատում որպես բանվոր, որն, անշուշտ, արգասիր էր Հայաստանի տնտեսական հետամնացության։ Եթե այդ ցուցանիշները համեմատենք կենտրոնական Ռուսաստանի համապատասխան տվյալների հետ, կստացվի այսպիսի պատկեր. արդյունաբերական արտադրանքի թողարկմամբ (մեկ շնչի հաշվով) Հայաստանը կենտրոնական Ռուսաստանից ետ էր մնում 3,2 անգամ։ Յուրաքանչյուր 1.000 բնակչին հասնող բանվորների թվով՝ 5 անգամ։ Ահա համապատասխան տվյալները (1913)։

Ցուցանիշները	Օրակոն Ռուսաստան	Հայաստան
Բնակչության թիվը (մլն.)	159,2	1,0
Բանվորների թիվը (հազ.)	3,536	6,0
Բանվորների տեսակարար կշիռը բնակչության թվի մեջ՝ տոկոսով	2,2	0,6

Հայաստանի բնակչությունը խոր փոփոխություններ կրեց առաջին համաշխարհային պատերազմի և ապա՝ դաշնակցականների տիրապետության շրջանում։ Պատերազմի կապակցությամբ նախ և առաջ կորակոչվեց արական սեռի աշխատունակ բնակչությունը։ Կիսաաշխատունակ տղամարդիկ, որ զորակոչից դուրս էին մնացել, ընդգրկվեցին թիկունքային աշխատանքներում։

[6] Брейтерман. Медная промышленность России и мировой рынок. Часть II. Л., 1925, էջ 90, 104։

Այսպիսով, արական սեռի հասակավոր ողջ բնակչությունը համարյա ամբողջովին կարվեց արտադրական աշխատանքից։ Զորակոչվածների ընդհանուր բանակն անցնում էր 200 հազար մարդուց, որը կազմում էր ամբողջ բնակչության 1/5-ը։ Կովկասյան բանակի ռազմական գործողությունները հիմնականում ծավալվում էին Արևմտյան Հայաստանի տերիտորիայում, որը գտնվում էր սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ։ Օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, Թուրքիայի կառավարող շրջանները ձեռնամուխ եղան ողջ արևմտահայության խպառ բնաջնջման իրենց ոմարդի ծրագրի իրականացմանը։ Ավելի քան մեկ միլիոն հայեր ոչընչացվեցին և նույնքան էլ բնավեր դարձած ցրվեցին աշխարհով մեկ։ Արևմտահայերի մի մասին միայն բախտ վիճակվեց անցնել Կովկաս, այդ թվում՝ նաև Հայաստան։

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանի բնիկ բնակչության վրա ավելանում էր արևմտահայ գաղթականությունը։ Ինչ վերաբերում է բնակչության բնական աճին, ապա միանդամայն հասկանալի պատճառներով պատերազմի տարիներին այդ աճը շատ էր իջել և հինգ տարիների ընթացքում կազմել էր ոչ ավելի, քան 5 տոկոս։ Նույն տարիներին, ըստ տարբեր հեղինակների հաշվումների, Հայաստանի բնակչությունը պակասել էր (պատերազմի և համաճարակների հետևանքով) 46.200 մարդով, այսինքն՝ մոտավորապես այնքան, որքան բնական աճն էր։

Ինչ վերաբերում է դաշնակցության տիրապետության շրջանում բնակչության քանակությանը, ապա անհրաժեշտ է նշել հետևյալը։ 1918—1920 թթ. բացի բնիկներից այստեղ էին տեղավորվել Արևմտյան Հայաստանից գաղթածները, Կարսի շրջանից և Սուրմալուի գավառից փախած հայ բնակչությունը։ Նույն ժամանակամիջոցում Անդրկովկասում բորբոքված ազգամիջյան կռիվների հետևանքով Ադրբեջանից ահագին թվով հայեր էին եկել Հայաստան։ Ընդհանուր առմամբ դրսից Հայաստան եկած բնակչությունը կազմում էր մոտ 300 հազար մարդ։ Հաշվի առնելով նաև բնիկ բնակչությունը, ինչպես նաև երկրից մեկնածներին, 1920 թ. վերջին Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը պետք է կազմեր մոտավորապես 1 միլիոն 300 հազար մարդ։ Սակայն դաշնակցականների տիրապետության կարճատև շրջանում հսկայական չափերի հասավ բնակչության մահացությունը՝ Հայաստանում ամենուրեք մոլեգնող համաճարակների և քաղցի հետևանքով։ 1918—1920 թթ. Հայաստանում ոչնչացել է մոտավորապես 430 հազար մարդ, այսինքն՝ ամբողջ բնակչության 1/3-ից ավելին։ Այդ էր պատճառը, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատման պահին բնակչության ընդհանուր քանակը կազմում էր ընդամենը 720 հազար մարդ։

Չնայած այն ծանր կորուստներին, որ ունեցավ հայ ժողովուրդը 1914—1920 թթ. ընթացքում, նա չոչնչացավ։ Իր պատմության այդ ծանր պահին նա իր բախտը կապեց Սովետական Ռուսաստանի հետ, որը նրա համար ազգային վերածննդի հնարավորություն ստեղծեց։ Ներկայումս Սովետական Հայաստանում, 1920 թ. 720 հազար մարդու դիմաց, լիարյուն կյանքով ապրում է ավելի քան 2 միլիոն 100 հազար մարդ։

НАРОДОНАСЕЛЕНИЕ АРМЕНИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД

Проф. О. Е. ТУМАНЯН

(Резюме)

В 1827 г. общая численность населения Восточной Армении составляла 97.521 человек. После присоединения Армении к России наблюдается тенденция быстрого роста населения, в основном за счет механического роста. Указанная тенденция продолжается на всем протяжении XIX в., в результате чего в конце столетия население Армении увеличилось более чем в восемь раз и в 1897 г. составило 797.855 человек. Источниками роста являлись переселение армян из Ирана и Турции, заселение Армении русскими сектантами и естественный прирост населения.

Произошли заметные сдвиги и в составе населения. Постепенно росло число городского населения. С развитием капитализма происходило разложение крестьянства, а промышленное развитие страны обусловливало формирование рабочего класса.

Тенденция быстрого роста населения Армении имела место также в первом десятилетии XX в., вплоть до первой мировой войны.

В 1913 г. население Армении составляло более одного миллиона человек. В годы первой мировой войны и в период господства дашнаков (1918—1920) из Западной Армении переселились несколько сот тысяч армян-беженцев. За этот же период от голода, эпидемий и других причин погибло около 430 тысяч человек. В результате всего этого в период установления Советской власти в Армении ее население составляло всего лишь 720 тысяч человек, т. е. в 3 раза меньше, чем население Советской Армении в настоящее время.